ՎԵՐՅԻՇԵԼՈՎ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԷՍԵՐ, ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐ

ԳԱԼԻԱ ԴԱՒԻԴՈՎԱ
galya.davidova.60@gmail.com

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Ներկայումս զգալիօրէն կրճատուել է հարսանեկան արարողութիւնների շրջանակը: Դրանցից միքանիսն այլեւս չեն կենցաղավարտում եւ երիտասարդ սերնդին գրեթէ անծանօթ են: Պահպանուել են նշանդրեքն ու բուն հարսանիքը: Որոշ արարողութիւններ էլ կա՛մ կրճատուել են, կա՛մ գրեթէ իմաստազրկուել, երբեմն էլ՝ վերաիմաստաւորուել: Այսօր հարսանեկան ծիսաշարքում մոռացուել է ազգայինը: Շատ յաճախ ներմուծուած, օտար ծէսերն աւելի ընդունելի եւ սիրուած են, ուստի անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հայոց հարսանեկան ծիսաշարքից դուրս մղուած կամ մասամբ պահպանուած հետաքրքիր եւ ուշագրաւ ծէսեր: Միայն աւագ սերնդի յիշողութիւններն են թոյլ տալիս վերադառնալ մեր ակունքներին, մասամբ՝ վերյիշել աւանդականը: Անհրաժեշտ է նոր մօտեցում, ապրել նորովի՝ չմոռանալով, թէ ո՛վ ենք, որտեղի՛ց ենք գալիս եւ որտե՛ղ են մեր ակունքները:

Յօդուածի նպատակն է ներկայացնել հայոց հարսանեկան որոշ ծէսեր, որոնք ժամանակակից սերնդին անծանօթ են: Մասնակի անդրադարձ ենք կատարել եւ համեմատական զուգահեռներ անցկացրել Հայաստանում ապրող ասորիների, եզդիների, ինչպէս նաեւ աշխարհի այլ էթնոսների հարսանեկան ծէսերի հետ:

ՀԱՐՍԱՆԻՔԸ՝ ՈՐՊԷՍ ԱԶԳԱՊԱՀՊԱՆ ԿԵՆՍԱՓՈՒԼ

Հարսանիքը ժողովրդական մշակոյթի իւրօրինակ հանրագիտարան է, ազգային մշակոյթի խորհրդանիշ: Այն դիտուել է իբրեւ ազգապահպան առաքելութեան բաղկացուցիչ մաս: Հայոց մէջ կենցաղավարուել են ինչպէս առեւանգմամբ, այնպէս էլ գնմամբ կամ պատգամախօսութեամբ ամուսնութեան ձեւերը: Այդ մասին բազմաթիւ գրաւոր տեղեկութիւններ են պահպանուել միջնադարեան աղբիւրներում, վկայագրերում, մանրանկարներում. Մխիթար Գօշի *Դատաստանագիրք*ում[1] եւ «Հարսանիքը Կանայում»[2] մանրանկարի նկարազարդումներում: Հայոց հարսանիքի վերաբերեալ ո-

[1] Մխիթար Գօշ, *Դատաստանագիրք*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 95:

[2] Հ. Յակոբեան, *Վասպուրականի մանրանկարչութիւնը*, «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1982, (ձեռ. N8782, նկարիչ՝ Ծերուն, 1391, էջ 33, ձեռ. 7566, նկարիչ՝ Մկրտիչ, 1460):

ոոշ նկարագրութիւններ են պահպանուել պատմիչների, մասնաւորապէս՝ Մովսէս Խորենացու մօտ. «*Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթենկանն*»[3]:

Հարսանեկան են այն բոլոր ծիսական արարողութիւնները, որոնցով ապահովւում է տղամարդու եւ կնոջ սեռական կապի յարատեւ կայունութիւնն ու ամրութիւնը, նոր սերունդ ստեղծելու նպատակը: Հարսանեկան ծէսերը, ինչպէս աշխարհի ժողովուրդների, այնպէս էլ հայ ազգի վերարտադրութեան հիմքն են հանդիսանում: ԺԹ. դարին բնորոշ հարսանեկան ծէսերը հայոց մէջ ընկալւում են որպէս աւանդական: Հայոց հարսանիքին անդրադարձել են ազգագրագէտներ Երուանդ Լալայեանը, Ստեփան Լիսիցեանը եւ այլ ուսումնասիրողներ[4]:

ՆԱԽԱՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԷՍԵՐ

Նախահարսանեկան ծէսերի հիմնական նպատակն ու իմաստն եղել է երկու կողմերի միջեւ համաձայնութիւնը, որն ուղեկցուել է նուէրների փոխանակմամբ: Յատկապէս կարեւորուել է փեսայի կողմից բերուած նուէրը, որն ընկալուել է իբրեւ ապագայ ամուսնութեան «նշան», հարսնացուին «իրենցը դարձնելու» իւրօրինակ կնիք: Եթէ մեր օրերում նշանի դերում հանդէս է գալիս ոսկէ մատանին, ապա աւանդական հարսանիքում որպէս այդպիսին կարող էր հանդէս գալ իւրաքանչիւր թանկարժէք իր՝ գլխաշոր, մետաղադրամ, ոսկէ կախազարդ, գործուած եւ կամ արծաթէ ընծայագիր գօտի, «փնջած խնձոր»: Աւանդական հարսանիքի նշանային ցուցիչ է եղել նաեւ հարսի արծաթեայ գօտին, որը գնում էր նրա հայրը նշանդրէքին հիւրերի կողմից նուիրաբերուած դրամով[5]: Գօտիները համարուել են չարը խափանող հուռութք՝ թալիսման: Դրանք զարդաբանուել են կեանքի գոյներով՝ սպիտակ, կանաչ մետաքսաթէլերով՝ կենաց ծառի մոտիւներով: Թէ՛ ազնուազարմ տիկնայք, թէ՛ գեղջուկ կանայք կրել են արծաթէ նուրբ ճարմանդներով գօտիներ[6], որոնք թալիսմանի, հմայակ-

---

[3] Մ. Խորենացի, *Հայոց պատմութիւն*, գ. 1, ՍՍՌՄ ԳԱ հայկական մասնաճիւղ, Երեւան, 1940, էջ 17-20:

[4] Ե. Լալայեան, «Գանձակի գաւառ», *Ազգագրական հանդէս*, 6:1900. նաեւ նոյնի՝ «Վայոց ձոր», *Ազգագրական հանդէս,* 13:1906. նաեւ նոյնի՝ «Վասպուրական», *Ազգագրական հանդէս,* 26:1916. նաեւ նոյնի՝ «Մուշ-Տարօն», *Ազգագրական հանդէս,* 26:1916. նաեւ՝ Ս. Լիսիցեան, *Զանգեզուրի հայերը*, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969. նաեւ նոյնի՝ «Լեռնային Ղարաբաղի հայերը», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն*, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1981:

[5] Ս. Պօղոսեան, «Հայկական զարդահամալիրների առանձնայատկութիւնը. աւանդոյթներ եւ նորոյթներ», *Աւանդականը ու արդիականը հայոց մշակոյթում*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2010, էջ 428-43:

[6] Գ. Կարախանեան, «Հայոց ժողովրդական մշակոյթը», *Հանրագիտարան, հտր. Ա.*, «Գիտութիւն», Երեւան, 2003, էջ 129:

պահպանակի գործառոյթ են ունեցել: «Փնջած խնձոր»[7] ներկայացուած է Հայոց ազգագրութեան թանգարանի (ՀԱԹ) ցուցադրութիւնում: Հարսանեաց խորհրդանիշերի շարքում կարեւոր դեր են խաղացել խնձորը եւ խնձորի գոյնը: Ծիսարարողակարգերում յատուկ տեղ են գրաւում «փնջած խնձորը», փեսացուի ծառի խնձորը, ինչպէս նաեւ «կարմիր խնձոր» ծէսը: Խնձորը կարեւոր դերակատարում ունի տարբեր ժողովուրդների դիցաբանութեան եւ մշակոյթի մէջ: Շատ ժողովուրդների համար այն սիրոյ, երջանկութեան, արգասաբերութեան, վերածննդի, առողջ սերնդի խորհրդանիշ է, իսկ ոմանց համար՝ տարակարծութեան (յունական դիցաբանութիւն) եւ արգելուած պտղի: Այստեղից է ծագում «Արգելուած պտուղը միշտ քաղցր է լինում» աստուածաշնչեան արտայայտութիւնը: Երկու դէպքում էլ խնձորն ընկալւում է որպէս «դրախտային, սրբազան» միրգ: Յունական առասպելներում Դիոնիսիոսը ի նշան սիրոյ՝ խնձոր է նուիրել Աֆրոդիտէին, իսկ երկինք Գեան (յունականական մայր հողի՝ երկրի չաստուածուհին) որպէս պտղաբերութեան խորհրդանիշ՝ Հերային, նրա եւ Զեւսի ամուսնութեան կապակցութեամբ[8]: Հայոց մէջ խնձորը ամրագրուել է որպէս սիրոյ, ամուսնութեան խորհրդանիշ, նոյնիսկ սիրոյ խոստովանութեան նամակի դեր է կատարել: Ինչպէս աշխարհի շատ ժողովուրդների մշակոյթներում, այնպէս էլ հայոց մէջ տղան հաւանած աղջկայ ոտքերի տակ կամ ջրում խնձոր է գլորել: Ըստ սովորութեան, եթէ աղջիկը վերցրել է խնձորը՝ տուել է իր լուռ համաձայնութիւնը: Այս գեղեցիկ սովորոյթն իր արտայայտութիւնն է գտել նոյնիսկ ժողովրդական բանահիւսութեան մէջ.

Խնձոր մ'ունիմ խաձած է
Խաձած տեղն արծթած է,
Էղբէրս ուզեց չտուի՝
Էս իմ եարիս տուածն է: (Գամիրք, Բինգեան)[9]

Թէ՛ յունական առասպելներում, թէ՛ հայոց մէջ ամուսնացող զոյգերը մինչ առագաստ մտնելը կերել են կիսուած խնձորի երկու կէսերը, որը սեռական մերձեցման համաձայնութեան միտում ունէր: Խնձորը հարսնացուի բարոյականութեան մաքրութեան խորհդանիշն է: Ինչպէս աշխարհի շատ ժողովուրդների (հարաւային սլաւոններ), այնպէս էլ հայոց (Գամիրք, Աղձնիք) մէջ խնձորը նոյնիսկ հարսանիքի հրաւէրքի դեր է կատարել:

Նախահարսանեկան ծէսերը եղել են շատ բազմազան: Հայաստանի իւրաքանչիւր պատմաազգագրական շրջան ունեցել է նախահարսանե-

---

[7] Նշանադրութեան ժամանակ աղջկան ձեռքն էին տալիս կարմիր խնձոր, որի վրայ հրաւիրեալները ոսկեայ եւ արծաթեայ դրամներ էին խրում որպէս ընծայ:

[8] Ն. Կուն, *Հին Յունաստանի լեգենդներն ու առասպելները*, «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1979: Երկիր Գեան իր ընդերքից աճեցրեց մի հրաշք խնձորենի՝ ոսկէ պտուղներով ու նուիրեց Հերային:

[9] Գ. Թեմուրճեան, «Գամիրքի հայերը», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հտոր. 1*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1970, էջ 115:

կան ծէսերի իրեն բնորոշ տարբերակները: Հայոց մէջ արբունքի հասած աղջկայ համար յատուկ նուիրագործման ծէսեր չեն կատարել, պարզապէս շրջազգեստի փէշը երկարացուել է՝ հասնելով մինչեւ կռունկը եւ աւելացուել են զգեստի որոշ մանրամասներ: Ախալքալաքում տարազային համալիրին աւելացել է գոգնոցը, որի խորհրդանշական բնոյթը լաւագոյնս արտայայտուել է «գոգնոցը խելք կը բերէ» արտայայտութեամբ[10], իսկ Շիրակում աղջկայ գլխին կապել են կարմիր գլխաշոր[11]: Որոշ շրջաններում էլ ձախ ձեռքի մատնեմատին կարմիր թէլ են կապել[12], որը խորհրդանշել է աղջկայ սեռատարիքային նոր խմբի մէջ մտնելու փաստը:

Աղջիկ ընտրելիս տղայի ծնողները յատուկ հետաքրքրուել են աղջկանով, հարց ու փորձ արել հարազատներից՝ տեղեկանալու համար, թէ նա ի՛նչ բնաւորութիւն ունի եւ ինչպիսի՛ տանտիկին կարող է լինել: Թեման եղել է ապագայ հարսնացուի առողջական վիճակը, ծնողների վարքն ու բարքը, դիրքը հասարակութեան մէջ: Առանձնայատուկ ուշադրութիւն են դարձրել հարսնացուի մօր վարքին. Բորչալուում ասել են՝ «Մօրը նայիր՝ աղջիկը առ, եզրին նայիր՝ կտաւը առ»,[13] Վայոց ձորում՝ «Ծէրիկը տես՝ գօտիկը առ, մէրիկը տես՝ աղջիկն առ», իսկ Նախիջեւանում աղջիկ ուզելիս ասում էին. «Եթէ մայրը ծառը բարձրանայ՝ աղջիկը ճիղերի վրայ ման կը գայ»[14]: Այս դէպքում եւս, ամենայն հաւանականութեամբ, նկատի են ունեցել աղջկայ մօր պահուածքը, բնաւորութիւնը եւ հասարակութեան վերաբերմունքը նրա նկատմամբ:

Հայաստանի պատմաազգագրական շրջաններում եղել են նշանադրութեան միքանի ձեւեր՝ օրօրոցի, շալակի, բարգեահի[15], Ծաղկազարդի նշա-

---

[10] Ե. Լալայեան, «Տղաբերքի սովորոյթների զարգացումը հայոց մէջ», *Տեղեկագիր*, ՀՍՍՀ գիտութեան եւ արուեստի ինստիտուտի հրատ., Երեւան, 1931. նաեւ՝ Կարախանեան, էջ 125:

[11] Գ. Դաւիդովա, Դաշտային ազգագրական նիւթ, այսու՝ ԴԱՆ, Շիրակ, 1990-92:

[12] Ե. Լալայեան, «Ջաւախք», *Ազգագրական հանդէս*, Ա:1896, Շուշի, էջ 29:

[13] Ե. Լալայեան, «Բորչալուի գաւառ», *Ազգագրական հանդէս,* 9:1902, Թիֆլիս, էջ 214. նաեւ նոյնի՝ «Վայոց ձոր», *Ազգագրական հանդէս,* 13:1906, Թիֆլիս, էջ 143:

[14] Ե. Լալայեան, «Նախիջեւանի գաւառ, Օրդուբադի կամ վերին Ագուլիսի ոստիկանական շրջան եւ կամ Գողթն», *Ազգագրական հանդէս,* 12:1905, էջ 134:

[15] Բարգահի (Գամիրք, Նախիջեւան, Սիսիան) ժամանակ տղան չէր մասնակցում նշանադրութեանը: Խնամախօսները խնձորի մէջ խրած մի մատանի էին տանում աղջկայ տուն՝ խնձորի վրայ գրելով հարսի անունը:
Շալակի նշանադրութեան դէպքում սիրահարուած տղան աղջկան իր զգացմունքների մասին յայտնելու համար ամէն օր գաղտնի մի զամբիւղ (քթոց) միրգ է ուղարկել աղջկայ տուն: Միքանի անգամ այս գործողութիւնը կրկնելուց յետոյ մէկի միջոցով յայտնել է «շալակ»ի իմաստը՝ որ նա սիրում է այդ տան աղջկան: Տանտէրերը համաձայնելիս՝ «շալակ»ի զամբիւղում դնում էին միքանի գաթա, թարմ կամ չորացրած մրգեր, միքանի զոյգ գուլպայ: Այս լուռ ծիսակատարութիւնից յետոյ աղջիկը համարւում էր նշանուած:

նադրութիւն եւ նոյնիսկ՝ օճախի պսակ: Միմեանց համակրող գերդաստանները բարեկամանալու նպատակով իրենց մանկահասակ երեխաներին նշանել են (Վարանդա) օրօրոցի մէջ: Գողթն գաւառում տղայի հայրը, ցանկանալով բարեկամանալ աղջկայ գերդաստանի հետ, խազ է քաշել աղջկայ օրօրոցի լծին, կամ կարմիր–կանաչ թէլ կապել[16]: Այս ծէսը կոչուել է օրօրոցի նշանադրութիւն, որը ԺԹ. դարասկզբին համընդհանուր բնոյթ է կրել: Ամուսնութեան այս ձեւով յաճախ հարթուել են գերդաստանների միջեւ եղած տարակարծութիւնները: Գանձակում ասել են «*եթէ աղջկան գդակով խփէք, նա վայր չընկնի, արդէն ժամանակն է պսակուելու, որովհետեւ ուժեղ է եւ կարող է աշխատել*»[17]: Այս արտայայտութիւնը լաւագոյնս բացայայտում է ժողովրդի վերաբերմունքը հարսնացուի նկատմամբ: Նա լրացուցիչ աշխատուժ էր եւ ընտրելիս հաշուի էին առնում աղջկայ ֆիզիկական հնարաւորութիւնները:

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԱՌԸ՝ ՈՐՊԷՍ ՊՏՂԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Հարսանեկան ծէսերի համակարգում իւրայատուկ տեղ է յատկացուել «փեսայի ծառին»: Այն խորհրդանշել է զոյգի պտղաբերութիւնն ու կեանքի յարատեւութիւնը: Հայաստանի գրեթէ բոլոր շրջաններում էլ տարածուած է եղել «կենաց ծառ», «փեսու ծառ» կամ «հարսանեաց ծառ» ստեղծելու, զարդարելու սովորոյթը: Զարդարուած ծառը տարբեր պատմաազգագրական շրջաններում տարբեր անուանումներ է ունեցել. Բաղէշում, Բուլանըխում՝ «նուռձ», Սասունում՝ «ուռք», Շատախում՝ «ուրց», Ալաշկերտում՝ «թագուորի բաղ», Արթիկում՝ «փեսի ծառ», Հայոց ձորում՝ «փեսի թառ», «փեսի փէտ», Իջեւանում՝ «փոփխ»:

Պսակադրութեան օրը՝ առաւօտեան, մակարները (փեսացուի ընկերները) հաւաքուել են փեսացուի տանը: Եօթ մակարներից մէկը յատուկ սափորի մէջ մի ծառի ճիւղ է բերել ու դրել մէջտեղում, այնուհետեւ երգելով ու պարելով քաղցրեղէնով զարդարել են «ծառը»: Այս արարողութիւնը կոչուել է «ծառ փնջել»:

Փեսայի ծառի մէկ այլ տարբերակում փայտէ խաչի շուրջը հասկեր են հիւսել եւ չոր պտուղներ կախել, իսկ ձողերի ծայրին՝ կարմիր խնձոր, կանաչ ու կարմիր ներկած ձուեր ամրացրել, որը խորհրդանշում է նորաստեղծ ընտանիքը՝ նրա բերրիութիւնը: Բուլղարների մօտ փեսայի «ծառը» նոյնպէս զարդարել են պտղատու կամ մշտադալար ծառերից կտրուած ճիւղերի վրայ, որոնք նորաստեղծ ընտանիքի աճման խորհրդանիշերն են

---

[16] Լալայեան, «Նախիջեւանի գաւառ», էջ 119:

[17] Ե. Լալայեան, «Գանձակ», *Երկեր, հտր. 2*, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1988, էջ 339:

եղել: Ծառը որքան առատ ու գեղեցիկ էր զարդարուած, այնքան հասարակութեան մէջ գնահատուած էր ու արժէքաւոր[18]:

Մուշում «փեսի ծառը» խաչաձեւ էր, որի երկու թեւերին մեծ խնձորներ են ամրացուել: Ծառը զարդարել են նաեւ գունաւոր ժապաւէնով, նռով, քաղցրաւենիքով: Ամբողջ հարսանեկան երթի ժամանակ այն ուղեկցել է ամուսնացող զոյգին եւ դրուել նրանց կողքին: Աղձնիքում փեսածառը փշատի ծառի մի հաստ ճիւղ է եղել, որի փշերի վրայ ամրացրել են չոր մրգերի շարան, նուռ, խնձոր, ընկոյզ եւ գագաթին՝ սպիտակ փետուրներով մորթած աքլոր, որը ունեցել է փեսացուին առնականութիւն հաղորդելու ակնկալիք:

«Ուռք»-«նուռձ»-«կենաց ծառ»ը հարսանիքի արարողութիւններում եղել է փառքի ու պտղաբերութեան խորհրդանիշ[19]: Մակարները փեսայի տան բակում պսակածառի պտուղները «կողոպտել» եւ նետել են հարսի շքախմբի գլխին՝ պտղաբերման նպատակով: Հարսի գլխին անձրեւի պէս տեղացել են արծաթեայ եւ պղնձեայ դրամներ, չիր ու չամիչ, նուշ ու ընկոյզ, որը համահայկական երեւոյթ էր[20]: Սասնայ Խուլթիկ գիւղում հարսին հագցնելուց յետոյ կանայք նրա ծամերի հետ չամիչի ու ընկոյզի շարք են հիւսել[21], իսկ Բուլղարիայում հարսնացուի ընկերուհիները ծաղիկներ են հիւսել վարսերի հետ[22]: Ծէսի նպատակն է եղել ապահովել հարս ու փեսայի քաղցր, երկար եւ բեղմնաւոր կեանքը: Խնձորի ծէսի ուշագրաւ նկարագրութիւն կայ *Սասնայ ծռեր* դիւցազնավէպում.[23]

... Դաւիթ հասաւ վեր դռան,
Քշեց, գնաց առջեւ Խանդութի պատուհան:
Խանդութ խանում՝ որ աչք ընկաւ,
Զ'Դաւիթ տեսաւ՝ ուրախացաւ.

---

[18] Р. Иванова, Л. В. Маркова, "Болгары," *Брак у народов Центральной и Юго-Восточной Европы*, («Պուլղարներ», Ամուսնութիւնը Կենտրոնական եւ Արեւելեան Եւրոպայի ժողովուրդների մօտ), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1988, էջ 135-60:

[19] Վ. Պետոյեան, *Սասնայ ազգագրութիւնը*, ՀՍՍՀ ԳԱ հրատ. Երեւան, 1965, էջ 259:

[20] Հարսին ոսկեայ եւ արծաթեայ դրամներ տալու հետաքրքիր ծէս ունեն հունգարները. նշանդրէքի դրամները փեսան փաթեթաւորել է գունաւոր թղթերի մէջ եւ հարսի հետ ձեռքսեղման ծէսի ժամանակ փոխանցել նրան (Н. Е. Руденский, "Венгры," *Брак у народов Западной и Южной Европы* («Հունգարներ», Ամուսնութիւնը Արեւմտեան եւ Հարաւային Եւրոպայի ժողովուրդների մօտ), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1989 էջ 66-87):

[21] Ռ. Նահապետեան, *Աղձնիքահայերի ընտանիքը եւ ընտանեկան ծիսակարգը*, ՀՀ ԳԳԱ հրատ., Երեւան, 2004, 258 էջ:

[22] Иванова-Маркова, էջ 147:

[23] *Սասունցի Դաւիթ, հայկական ժողովրդական էպոս*, «Արեւիկ» հրատ., Երեւան, 1989, էջ 357:

Ուրախութիւնէ խնձոր մէզար Դալթին:

Հայաստանի ասորիները տանիքից հարսի գլխին հարսանեկան ծառից՝ «ջեբլեանա կամ գեանթա դ մալքիա (թագաւորի այգի)»[24] նետել են խնձոր, նուռ, չիր, իսկ եզդիները «Դարա մրազա (երջանկութեան ծառ)»ից[25] երեք խնձոր են նետում դէպի հարսը՝ նրան իւրային դարձնելու միտմամբ (ԴԱՆ, 2016): Ուշագրաւ ու խորհրդանշական է, որ նորապսակների սենեակում մրգերով զարդարուած ծիսական ծառի պտուղներից են դրել, որպէսզի միասին ճաշակեն: Զարդարուած ծառի ոգին եղել է սրբազան եւ սերունդ է պարգեւել կանանց[26]: Հայոց մէջ նորապսակներին բարեմաղթանք անելիս ասում են. «Ծլի՛ս ու ծաղկի՛ս. քու տիրոջ հետ մի բարձի ծերանաք», ասորիները՝ «Ըլ խա սպադիյա սեւի» (մի բարձի ծերանան), իսկ եզդիները հարսի ընտանիքի կողմից հարսնառի ժամանակ փեսային նուիրում են ասեղնագործ բարձ, որը խորհրդանշում է նրանց անբաժան, երջանիկ կեանքը[27]: Հարսանիքի ժամանակ՝ միչեւ տուն մտնելը, մակարներից մէկը այդ բարձով երեք անգամ խփում է փեսացուի գլխին:

ՆՈՒԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԾԷՍԵՐ

Հարսանիքի ընթացքում հարսն ու փեսան անցել են փորձութիւնների միջով: Հարսանեկան ողջ ծիսակարգի ընթացքում նորապսակների նուիրագործման ծէսերն անընդհատ փոփոխութեան են ենթարկւում: Անցումային ծէսերի ժամանակ փորձութիւնների միջոցով ստուգել են նորապսակների ուշիմութիւնը, խելացիութիւնը, զգօնութիւնը, մի կարգավիճակից միւսին անցնելու պատրաստուածութեան աստիճանը:

Գամիրքում հարսի զգօնութիւնը փորձելու համար շէմի առաջ խաչերկաթ են դրել, հարսը ոտքը քսքստացնելով առաջ է շարժուել եւ զգացել ծանր երկաթի ներկայութիւնը, վերցրել է եւ յենել պատին: Այսպիսով փորձել են հարսի զգօնութիւնը, եթէ նա երկաթը յենել է պատին՝ ուրեմն խելացի է:

Գանձակում պսակադրութեան ժամանակ ստուգել են փեսայի խելացութիւնը. երբ քահանան միացրել է թագաւորի ու թագուհու ձեռքերը, փեսան պէտք է գտնէր հարսի ձեռքում պահուած մոմի փոքրիկ կտորը, որը

---

[24] Г. Кагаров, *Свадебные обычаи ассирийцев,* Советская этнография (Ասորիների ամուսնական սովորոյթները, սովետական ազգագրութիւն), Մոսկուա, 1933, N 1, էջ 163:

[25] Ամինէ Աւդալ, *Եզդի քրդերի հաւատալիքները*, «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2006, էջ 57:

[26] Ջ. Ֆրեզէր, *Ոսկէ ճիւղը, մոգութեան եւ կրօնի ուսումնասիրութիւն*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1989, էջ 146-47:

[27] Ամինէ Աւդալ, *Անդրկովկասեան քրդերի կենցաղը*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1957, էջ 53: «Ռաւանդնա բալգիէ բուկէ» - հարսի բարձը փախցնել:

հարսնացուին տուել են ընկերուհիները: Եթէ նա գտել է մոմը եւ ցոյց տուել մակարներին՝ նրանք գովաբանել են իրենց ընկերոջ խելքը, եթէ ոչ՝ ծաղրել: Ծաղրանքի ենթարկուած փեսան փող է վճարել հարսնացուի ընկերուհիներին, որ թաքցնեն չգտած մոմի պատմութիւնը[28]: Արցախի Փիփ, Բանանց գիւղերում նորահարսի հայրական տան բակում մի ձողի ծայրին ցցել են խնձոր, իսկ ներքեւից՝ կապել նորահարսի ձեռքով գործած գուլպայ: Մակարները հրացանով խփել են խնձորին եւ թռցրել ձողի ծայրից: Յաղթող դիպուկահարն արժանացել է գովասանքի եւ ստացել գուլպան[29]: Այստեղ փորձութեան է ենթարկւում տղաների նուիրագործման ծէսի եւս մէկ մասնակից՝ մակարը: Հարսանիքից յետոյ շարունակուել են հարսի փորձութիւնները: Աւել անելիս եթէ նա աղբը ալէր դէպի դուրս՝ տան գաղտնիքը դուրս հանող էր, իսկ դէպի անկիւն՝ ընտանիքի գաղտնիքը պահող, խելացի հարս, որի համար նա նուէր կը ստանար[30]: Հայոց հարսանիքի ժամանակ հարսը չի նստել եւ սպասել է սկեսրոջ ընծային, որը կոչուել է «նստելա»: Այս ընթացքում հարսը եւս փորձութեան է ենթարկուել՝ նրա տակ դրել են թաշկինակ կամ որեւէ իր: Եթէ նստելուց առաջ նա դա վերցրել է՝ արժանացել է գովասանքի, եթէ ոչ՝ ծիծաղի ու ծաղրանքի: Այստեղ մեծ դեր է ունեցել մօր դաստիարակութիւնը, քանի որ հարսնացուն տարիքով փոքր է եղել եւ նրա բոլոր սխալները վերագրուել են մօրը:

ՇԷՄԻ ԵՒ ՀԱՐՍԻՆ ԴԻՄԱՒՈՐԵԼՈՒ ԾԷՍԵՐ

Հարսանեկան ծիսակարգի ողջ ընթացքում ամուսնացող զոյգը խոցելի է՝ վտանգուած չար ուժերի կողմից: Հարսանեկան ծիսաշարում մեծ կարեւորութիւն են ունեցել շէմի հետ կապուած արարողութիւնները, որոնք ապահովել են հարսի բարեյաջող մուտքը նոր ընտանիք: Սա կապուած է այն պատկերացման հետ, որ չար ուժերը բնակւում էին տան շէմի վրայ: Նորապսակների մուտքը շէմից առաջին անգամ նշանաւորուել է ափսէ կոտրելով՝ չարը խափանելով: Վասպուրականում փեսան ոտքի մէկ հարուածով կոտրել է ափսէն, ներկաների «կոտրի քեասէն, ապրի փեսէն»[31] կանչի տակ: Այսպէս ի ցոյց է դրուել փեսայի իշխանութիւնը հարսի նկատմամբ: Աղձնիքում էլ հարսն է չոր մրգերով լի սափորը գետնին խփելով կոտրել հենց շէմի վրայ՝ իբրեւ զոհաբերութիւն, որը հաւանաբար հասցէ-

---

[28] Լալայեան, «Գանձակ», էջ 351:

[29] Նոյն, էջ 352:

[30] Նմանատիպ ծէս ունեն աւստրիացիները. եթէ հարսը աղբի կոյտի վրայով անցնէր՝ ապա կը համարուէր «վատ տնտեսուհի եւ անկարգապահ կին» (Т. Д. Филимонова, “Австрийцы,” *Брак ы народов Западной и Южной Европы* («Աւստրիացիներ», Ամուսնութիւնը Արեւմտեան եւ Հարաւային Եւրոպայի ժողովուրդների մօտ), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1989, էջ 56:

[31] Ե. Լալայեան, «Վասպուրական», *Ազգագրական հանդէս*, 20:1910, Թիֆլիս, էջ 156. նաեւ՝ Թեմուրճեան, «Գամիրք», էջ 119:

ագրուած է եղել տնարարութեան աստուածուհի Նանէին[32]: Ակնում, Արաբ-կիրում հարսի մուտքի ժամանակ կնքամայրն ու սկեսուրը կամ սկեսրայրն ու սկեսուրը տան շէմին ձեռքերով կամար են կապել, որ հարսն ու փեսան անցնեն՝ ի նշան հնազանդութեան: Սկեսուրը հարսին շէմի վրայ համբուրել է, ասելով. «Հարսս ոտքդ երջանկաբեր, գլուխդ բախտաւոր լինի»: Այստեղ «գլուխ» բառը նշանակում է տղամարդ, տան գլխաւոր: Իսկ Աղձնիքում տարածուած է եղել նաեւ հարսի կողմից նուռը դռան գլխին խփելով ջարդելու սովորոյթը. նռան հատիկները խորհրդանշել են բազմազաւակութիւն[33]:

Հարք գաւառում պսակադրութեան գնալիս, մինչեւ եկեղեցի հասնելը, փեսան քթի տակ խնձոր էր պահում, որը պէտք է ապահովէր զոյգերի արգասաւորութիւնը[34]: Հայաստանի ոչ-բոլոր պատմազգագրական շրջաններում է ընդունուած եղել հարսի ուսերին սկեսուրի ձեռքով լաւաշ գցելու սովորոյթը, որից յետոյ հարսն այն գցել է տան վերին անկիւններից մէկը, որպէսզի ոտքը բարեբեր լինէր, տունը՝ հացով միշտ լի: Ուշադրութեան արժանի հարսանեկան մի գեղեցիկ սովորոյթի համաձայն, երբ հարսն ու փեսան անցել են գերդաստանի շէմը, նրանց ետեւից ներս է մտել տան տիկինը՝ բերքառատութեան մաղթանքներով եւ նրանց ուսերից վերցրել նախօրօք գցած լաւաշները, իր ձեռքով մանրացրել է փոքր մասերի եւ դուրս եկել բակ, շրջուել մէջքով դէպի շէմը եւ հացի կտորտանքը նետել կտուրը, ասելով. «էս էլ թռչունների բաժինը»: Թռչուններին բաժին հանելու ծէսը դիտւում է որպէս զոհաբերութիւն եւ աստուածահաճոյ արարք, որպէսզի Աստուած քաղցր աչքով նայէր նորապսակներին[35] (ԴԱՆ 1990-92): Աղձնիքում սկեսուրը հարսին դիմաւորել է ալիւրով ու չամիչով: Հարսը մատը թաթախել է ալիւրի մէջ, խաչեր է արել դռան կողերին: Ազգագրագէտ Բդոյեանի կարծիքով այս ծէսը կապուած է եղել մարդուն հաց պարգեւող

---

[32] Նահապետեան, էջ 150:

[33] Խորվաթիայում երիտասարդ կինը մտնելով նոր տուն, տուեալ օճախին խնձոր է «նուիրել»: Սերպիայում եկեղեցում պսակադրութեան ժամանակ հարսնացուն իր հետ վերցրել է խնձոր, որպէսզի երեխաները ծնուէին առողջ ու գեղեցիկ, իսկ Սլովաքիայում հարսը շուռ է տուել խնձորով լի զամբիւղը (М. С. Кашуба, “Народы Югославии,” *Брак у народов Центральной и Юго-Восточной Европы* («Հարաւսլաւիայի ժողովուրդները», Ամուսնութիւնը կենտրոնական եւ հարաւ-արեւելեան ժողովուրդների մօտ), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1988, էջ 82-135): Իսկ Հնդկաստանում հինդու հարսնացուն «Արատոր» ծէսի ժամանակ աջ ոտքով շուռ է տալիս բրնձով եւ մետաղադրամներով կճուճը, որը խորհրդանշում է հարստութիւն (hy. Wikipedia.org/wiki/Հնդկաստանի մշակոյթը , մատչում՝ 25.02.2022):

[34] Բենսէ, «Բուլանըխ կամ Հարք գաւառ», *Ազգագրական հանդէս*, Ե:1889, Թիֆլիս, էջ 113:

[35] Հայոց մէջ ընդունուած է եղել առաջին բերքի ալիւրից թխած առաջին հացը զոհաբերել՝ բաժանել թռչուններին:

Ամանոր եւ Վանատուր աստուածութիւնների հետ[36]: Չամիչը քաղցրացրել է հարսի մուտքը, ալիւրը՝ խորհրդանշել հացնառատութիւն: Տանեցիներից մէկը՝ իւղի ամանը ձեռքին, դիմաւորել է նորապսակներին դռան շէմին: Նորահարսը միքանի կոպեկ է գցել իւղի մէջ, մատը իւղոտել ու քսել դռան գլխին եւ սկեսրոջ մազերին: Սկեսուրը նրան օրհնել է՝ ասելով. «Ձեռնդ ընի եղի մաջին, քըմատաղ»[37]: Այս ծէսում դրամը դիտւում է որպէս հարստութեան, լիութեան, իսկ սկեսուրի գլխին իւղ քսելը՝ առատութեան խորհրդանիշ, քանի որ նա էր ճաշ պատրաստողը: Նմանատիպ հարսանեկան ծէսեր ունեն ինչպէս հայերը, այնպէս էլ աշխարհի շատ ժողովուրդներ. հնդիկների մոտ հարսը շէմի մօտ մատը իւղոտել ու քսել է դռան շէմին:

ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻՆ ՉԱՐԻՑ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ԾԷՍԵՐ. ՉԱՐԻ ԽԱՓԱՆՈՒՄԸ ՊԱՐՈՎ

Մի ամբողջ խումբ են կազմել հարսանեկան ծիսակատարութիւններին ուղեկցող հաւատալիքներն ու հմայական գործողութիւնները, որոնք միտուած են եղել նորապսակների առողջութեան եւ արգասաւորութեան ապահովմանը, ինչպէս նաեւ չարքերից ու վնասակար ուժերի ազդեցութիւնից զերծ պահելուն:

Այսպիսի միջոցառումներից են եղել չար ուժերի ուշադրութիւնը շեղելու նպատակով եկեղեցուց վերադառնալիս ճանապարհը փոխելը (այսօր որոշ գիւղերում կիրառում են), չարքերին խափելու նպատակով փեսային լողացնելիս մակարներից մէկին փեսայի հետ լողացնելը, երբեմն էլ՝ տաշտի մէջ երկաթ դնելը[38]: Այս ամէնի նպատակը փեսացուի առնականութիւնը պահպանելն է եղել: Նոյնանման բովանդակութիւն է ունեցել փեսացուին սափրելու ծէսը, երբ նրա երեսը շախմատաձեւ ածիլել են՝ վերածելով բոստանի: Հարքում ու Սասունում չսափրուած մազերը ներկայացուել է իբրեւ սէխ ու ձմերուկ: Սափրիչն ու մակարապետը կատակով բոստանը վաճառքի են հանել: Այս ծէսը կոչուել է բոստան դնել[39]: Ժողովրդական պատկերացումներում առաւել ազդեցիկ է եղել մազի, եղունգի, լուսանկարի, հագուստի վրայ արուած կախարդութիւնը: Ուստի փեսայի մազերը որպէս բոստան ներկայացնելը նպատակ է ունեցել շեղելու չար ուժերին, միւս կողմից, բոստանն ինքնին պտղաբերութեան խորհրդանիշ է եղել: Ոչ միայն հայերի, այլեւ աշխարհի տարբեր ժողովուրդների մօտ այս պատկերացումներն ունեն տարբեր դրսեւորումներ: Փեսային առնականութիւնից զրկելու համար մսացուի մորթի ժամանակ հանգոյցներ են արել, մսացուի

---

[36] Վ. Բդոյեան, *Հայ ազգագրութիւն, համառօտ ուրուագիծ*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1974, էջ 61:

[37] Լալայեան, «Վարանդա», *Երկեր,* էջ 117 :

[38] Ըստ հաւատալիքների երկաթը չարից պաշտպանելու յատկութիւն է ունեցել:

[39] Նահապետեան, էջ 59:

արեան վրայ կողպէք են փակել: Փեսային «կապելու» մտավախութիւնն էր, որ մսացուի օրը քաւորը կամ փեսայի մայրը մորթուող անասունի արեան մէջ թաթախել են կողպէք եւ փակել, որը բացել են առագաստի գիշերը՝ նորապսակների անկողնու վրայ: Ժողովրդական պատկերացումների համաձայն, փեսան կը կորցնէր իր սեռական ուժը, եթէ մինչեւ ամուսնութեան քառասունքի լրանալը այցելէր մեռլատուն: Այս դէպքում փեսան համարուել է «կոխուած» եւ հաւատացել են, որ «կոխը» կը վերանար միայն հանգուցեալի քառասունքը լրանալուց յետոյ: Նորափեսան եւ նորահարսը կարող էին «կոխը» ստանալ նաեւ դեռեւս քառասունքը չլրացած ծննդկանին այցելելու հետեւանքով: Կոխը չէզոքացնելու նպատակով տղայի մայրը նորապսակներին լողացրել է մի տաշտի մէջ՝ մէջք-մէջքի ամուր յենուած, եօթ բաժակ ջրով, եօթ սրբի անուն տալով: Ըստ Բդոյեանի, այս գործողութիւնը հայոց եօթ գլխաւոր աստուածութիւններին դիմելու հին սովորոյթի արձագանգն էր: Մէկ այլ ծէսի համաձայն «կոխուած» նորահարսին եօթ անգամ պտտել են Տեառնընդառաջի խարոյկի շուրջը, որի իմաստը պտղաբերելու կարողութեան ապահովումն է եղել:

Ըստ հաւատալիքների՝ ճանապարհներն այն վտանգաւոր տեղերն են, որտեղ մշտապէս վխտացել են չարքերը: Երաժշտութեան ձայնից աշխուժանալով՝ նրանք դարձել են աւելի վտանգաւոր, իսկ հարսն ու փեսան՝ աւելի զգայուն ու խոցելի: Պարն այս դէպքում համարուել է աւելի զօրեղ պաշտպանիչ միջոց (հմայակ-պահպանակ): Պարերում կրունկների, ծափերի զարկերը նրանց ոչնչացնելու ամենազօրեղ միջոցներն են եղել, որոնցով ակնկալուել է չար ուժերի չէզոքացում: Ճանապարհը, որով անցել են հարսն ու փեսան, մէկ կարգավիճակից միւսին անցնելու այն ճանապարհն է, որով սահման է դրուել անցեալի ու ներկայի, եւ ինչ-որ չափով՝ ապագայի միջեւ:

Հայաստանի բոլոր պատմաազգագրական գաւառներում հարսի պարը համարուել է պարտադիր վերջաբան-արարողութիւն: Երբ լուսաբացին աքաղաղը երեք անգամ կանչել է, քաւորը յայտարարել է, որ եկել է հարսի մոմերով պարը կատարելու ժամանակը, պէտք էր պատրաստուել այդ եզրափակիչ արարողութեանը: Այս պարին մասնակցելու իրաւունք է տրուել միայն ամուսնական զոյգերին, այն էլ՝ երջանիկ, ունեւոր ու բազմազաւակ: Եօթ զոյգի ներկայութիւնը այս պարում պարտադիր է եղել: Քաւորակինը իւրաքանչիւր զոյգին բաժանել է մէկ վառուող մոմ: Որպէս օրէնք պարաշրջանը փակ է եղել: Հարսն ու փեսան կատարել են միայն երեք պտոյտ եւ դուրս եկել պարաշրջանից: Հաւատալիքների համաձայն վառուող մոմը եւ առհասարակ կրակը սեռական ուժի խորհրդանիշն է եղել եւ իր ուժը փոխանցել է ամուսնացող զոյգերին: Հարս ու փեսայի կիսավառուած մոմերը պահել են եւ վառել հարսի առաջին ծննդաբերութեան ժամանակ:

Պարելու ժամանակ փեսան աջ գրպանից հանել է նախապէս պատրաստած ցորենի հատիկներ, քաղցրաւենիք, մանր դրամ եւ շաղ տուել

պարողների գլխին[40]: Հաւատալիքի համաձայն այս արարողութիւնը ապահովել է առատութիւն, պահպանել փեսայի տղամարդկային ուժը եւ պտղաբերելու կարողութիւնը: Այս ծէսը փեսային իրաւունք է տուել մտնել ամուսնական առագաստ եւ համարուել հասարակութեան լիարժէք անդամ: Ըստ օրէնքի ամուրի տղաներին ցորեն ցանելու իրաւունք չի տրուել:

(ՊԱՊԵՆԱԿԱՆ) ՔԱՒՈՐԻ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՍԱՆԻՔՈՒՄ

Շատ մեծ է եղել քաւորի (շէմի, օճախի, գերդաստանի, պապենական քաւոր) դերը հայոց աւանդական գերդաստանում: Առանց նրա մասնակցութեան չի կատարուել ընտանեկան եւ ոչ մի նշանաւոր իրադարձութիւն, ոչ մի հանդէս: Նա ընտանեկան բոլոր տօնախմբութիւնների եւ սգոյ արարողութիւնների գլխաւոր դերակատարն էր ու պատուաւոր ղեկավարը: Քաւորի դերը մեծ է եղել յատկապէս հարսանեկան ծէսերի ու կնունքի ժամանակ[41]:

Հարսանեկան հանդերձը հագցնելուց յետոյ նորահարսի գօտին կապել է քաւորը՝ բեղմնաւորութեան բարեմաղթանքով. «Առաջնեկդ տղայ լինի»[42], «Ծառ էղնիս ու ճիւղ տաս»[43]: Գօտին հանդէս է եկել որպէս ուժի փոխանցման եւ բեղմնաւորութեան խորհրդանիշ: Բազմաթիւ ժողովրդական սովորոյթներում քաւորը միշտ հանդէս է գալիս իբրեւ նորափեսայի ընտանիքի ամենայարգուած, հեղինակաւոր անձ, խորհրդատու, ընտանեկան դատաւոր եւ վէճերի հաշտարար: Քաւորի իւրաքանչիւր այցը համընտանեկան իրադարձութիւն էր, իսկ խօսքը՝ օրէնք: Ոչ մի կարեւոր հարց չի լուծուել առանց քաւորի միջամտութեան: Քաւորը սրբութիւն է եղել ոչ միայն ընտանիքի, այլեւ ողջ ազգատոհմի համար[44]: Հասարակութիւնը դատապարտել եւ մեղք է համարել քաւոր փոխելը: Երբ քաւորն ու քաւորակինն այցելել են սանիկների տուն, տնեցիներին արգելուել է տանիք բարձրանալ կամ անցնել տան ետեւի կողմով. դա քաւորին հաշուի չառնելու, վիրաւորելու իմաստ է ունեցել: Քաւորի անկողնու վրայ նստելը, նրա տան կտուրը բարձրանալը «մեղք» է համարուել: Ըստ եկեղեցու կանոնների՝ բացարձակօրէն արգելուել է որեւէ ամուսնութիւն սանիկների եւ քաւորի

---

[40] Ժ. Խաչատրեան, *Ծիսական պարը հայոց հաւատալիքների համատեքստում*, ՀՀ ԳԱԱ, Երեւան, 2014, էջ 54:

[41] Քաւորը յատուկ լիազօրուած իրաւունքներ է ունեցել նաեւ Սլովաքիայում եւ հարաւ-արեւելեան Եւրոպայի այլ ժողովուրդների մօտ (Ю. В. Бромлей, М. С. Кашуба, *Брак и семья у народов Югославии* (Ամուսնութիւնը եւ ընտանիքը Հարաւսլաւիայի ժողովուրդների մօտ), «Գիտութիւն», Մոսկուա, 1982, էջ 237):

[42] Պօղոսեան, էջ 436:

[43] Ա. Իսրայէլեան, «Խօսքի մոգական ուժը», *Շնորհ ի վերուստ. առասպել, ծէս եւ պատմութիւն, գիտաժողովի նիւթեր*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն», Երեւան, 2008, էջ 162-75:

[44] Գ. Իփէկեան, «Քաւորը», *Ազգագրական հանդէս*, 24:1913, Թիֆլիս, էջ 90-91:

սերունդների միջեւ՝ սահմանելով քաւորի ու սանամօր միջեւ մի ազգակցութիւն, որը հաւասար էր արեան ազգակցութեան: Սովորոյթի համաձայն՝ հարսն ու սանամէրը երբեք չպիտի խօսէին քաւորի հետ: Վերջիններիս իրարից խուսափելու մասին պատմւում են շատ աւանդազրոյցներ: Շիրակի Սառնաղբիւր գիւղի ձորի «Քաւոր-սանամէր քարերը», «Սանամէրը աղբիւրի մօտ»[45] վարքաբանական աւանդազրոյցներում ներկայացուած են բարոյաընտանեկան կարգի խախտման իրադրութիւններ: Քաւորն ու սանամէրը աւանդազրոյցներում բարոյական կարգը խախտելիս քար են դարձել:

Սակայն ոչ-բոլոր ընտանիքներն են ապրել համերաշխ ու երջանիկ: Ոչ յաճախ, սակայն գրանցուել են նաեւ ամուսնալուծութեան դէպքեր, որտեղ վճռական խօսքը քաւորինն է եղել: Ժողովրդի պատկերացմամբ՝ «Աստծուց ներքեւ միայն քաւորն է»[46]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հետազօտողների գրանցուած հարուստ ու առատ նիւթերը հնարաւորութիւն են ընձեռել եզրակացնել, որ այսօր դադարել ենք արժեւորել մեր աւանդական հարսանեկան ծէսերը: Այս ծէսերից որոշները մնացել են միայն որպէս գրաւոր աղբիւր: Բնութագրական է, որ աւանդական ծէսերի մեծ մասը մոռացուել է կամ աստիճանաբար կորցրել հիմնական ձեւը: Մոռացութեան են մատնուած տիեզերաստեղծ ծէսերը, յատկապէս՝ եզմորթէք, փեսասափրէք, թագուորագովք: Լիայոյս ենք, որ մեր ժողովրդի ներէթնիկ փոքր խմբերում դեռեւ ապրում են ու կենցաղավարում որոշ ծէսեր՝ փոքր ինչ վերափոխուած ձեւերով, ստանալով նորանոր դրսեւորումներ: Յիրաւի, դարերի խորքից եկած սովորոյթի, աւանդոյթի ուժն ամենակարող է, մնում է միայն դիմակայել դրսից ներմուծուած փորձութիւններին:

---

[45] Ս. Յարութիւնեան, *Հայ առասպելաբանութիւն*, «Անտարես», Երեւան, 2017, էջ 241:

[46] Դաւիդովա, ԴԱՆ, Արմաւիր, 2016:

REMEMBERING AND REVIVING ARMENIAN WEDDING CEREMONIES AND MARRIAGE SYMBOLS
(Summary)

GALYA DAVIDOVA
galya.davidova.60@gmail.com

The paper describes a set of Armenian wedding ceremonies (or remnants of them) that no longer exist and are almost unknown to the younger generation. The author draws parallels between the wedding ceremonies of the Armenians, Assyrians, and Yezidis living in Armenia to understand how natives have preserved their folkloric tradtions.

The paper notes that the current range of wedding procedural ceremonies has been significantly reduced. Only the engagement and wedding ceremonies have been preserved. Besides, oftentimes foreign rites are adopted and have become a trend.

The author argues that it is necessary to revive interesting and notable traditional rites, which are partly preserved in the Armenian wedding ritual. Reviving such traditions would put the participant in connection with their origins. The author argues that reviving these traditions by enriching them with a contemporaray twist or a new approach would help the individual avoid rituals that are incompatible with the nature and traditions of the Armenian nation.